

Կ Ա Ր Գ

ԱՐՅԱՆ ԿԱՄ ԴՐԱ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ, ԱՐՅԱՆ
ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ԱՐՅԱՆ ԴՈՆՈՐԻ ԱՐՅՈՒՆԻՑ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ԱՆՋԱՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են արյան կամ դրա բաղադրամասերի տեղափոխումը, արյան բաղադրամասերի պատրաստումը և արյան դոնորի արյունից ֆիզիկական մեթոդներով բաղադրամասերի անջատման պայմանների հետ կապված հարաբերությունները:

II. ԱՐՅԱՆ, ԴՐԱ ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

2. Արյան բաղադրամասերի տեղափոխումը կատարվում է արյան դոնորություն, փոխներարկումային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից:

3. Արյան, դրա բաղադրամասերի տեղափոխումն իրականացվում է հատուկ ջերմամեկուսիչ փակ արկղերով (կոնտեյներներով): Արկղերի փականները պետք է բացառեն արյան արտահոսքն արկղից դուրս ցանկացած դեպքում: Արկղերի մակերեսները պետք է ունենան ոչ ջրաթափանց և ախտահանման ենթակա ծածկ, լինեն չոր և մաքուր: Չոր սառույցով տեղափոխման արկղերը պետք է առաջացող գազի արտահոսքի հնարավորություն ունենան: Հետազոտված և չհետազոտված արյան և արյան բաղադրամասերի տեղափոխման ժամանակ դրանք պետք է դիտվեն որպես վարակ պարունակող նյութ:

4. Արյան և արյան բաղադրամասերի տեղափոխումն իրականացվում է՝ ապահովելով պահպանման ջերմային ռեժիմն ամբողջ ժամանակահատվածում, որը չպետք է գերազանցի 24 ժամը: Այսպես՝

1) ամբողջական արյան և էրիթրոցիտային զանգվածի տեղափոխումն իրականացվում է $+2^{\circ}\text{C}$ $+6^{\circ}\text{C}$ ջերմաստիճանում: Պահանջվող ջերմաստիճանն ապահովվում է սառույցի կամ այլ սառցանյութի (օրինակ՝ գեյ) միջոցով, որոնց ծավալը պետք է լինի տեղափոխվող արյան ծավալից ոչ պակաս: Էրիթրոցիտային զանգվածի պարկերի շփումը սառցանյութի հետ բացատելու և պարկի վնասման ռիսկը արյան արտահոսքի կանխարգելման նպատակով անհրաժեշտ է կատարել պարկերի երկրորդային փաթեթավորում: Էրիթրոցիտային զանգվածը կարող է տեղափոխվել նաև արյան և դրա բաղադրամասերի համար նախատեսված հատուկ շարժական սառնարաններում:

2) թրոմբոցիտային զանգվածը տեղափոխվում է՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի հունվարի 25-ի «Արյան կամ դրա բաղադրամասերի որակական հատկանիշների ապահովման նպատակով հատուկ ջերմային և անվտանգության պայմաններում պահպանման կարգը հաստատելու մասին» N 03-Ն հրամանով սահմանված պահպանման բոլոր պահանջվող պայմանները: Թրոմբոցիտային զանգվածի պարկի վնասման ռիսկը արտահոսքի կանխարգելման նպատակով կատարվում է պարկի երկրորդային փաթեթավորում:

3) թարմ սառեցված պլազման տեղափոխվում է՝ ապահովելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի հունվարի 25-ի «Արյան կամ դրա բաղադրամասերի որակական հատկանիշների ապահովման նպատակով հատուկ ջերմային և անվտանգության պայմաններում պահպանման կարգը հաստատելու մասին» N 03-Ն հրամանով սահմանված պահպանման բոլոր պահանջվող պայմանները: Թարմ սառեցված պլազմայի տեղափոխման ժամանակ պահպանման ջերմային ռեժիմն ապահովելու նպատակով օգտագործվում է չոր սառույց՝ կիրառելով թարմ սառեցված պլազմայի պարկի երկրորդային

փաթեթավորում: Տեղափոխման արկղի մեջ չոր սառույցի քանակը պետք է լինի ոչ պակաս, քան տեղափոխվող պլազմայի քանակը:

III. ԱՐՅԱՆ ԲԱՂԱԴԻՐԱՄԱՍԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

5. Արյան հավաքումը և արյան բաղադրամասերի պատրաստումն իրականացվում են արյան դոնորություն իրականացնող կազմակերպություններում:

6. Արյունը հավաքվում է 18 տարին լրացած, արյունատվության հակացուցում չունեցող անձանցից՝ ղեկավարվելով «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով:

7. Արյան բաղադրամասերը՝ էրիթրոցիտային զանգվածը, պլազման և տրոմբոցիտային զանգվածը, ստացվում են ամբողջական արյունից՝ ֆիզիկական եղանակով՝ համաձայն սույն կարգի NN 1 և 2 աղյուսակների պայմանների՝

1) այսպես՝ ֆիզիկական մեթոդներն են՝

ա. արյան բաղադրամասերի ցենտրիֆուգման եղանակը, որ իրականացվում է տարբեր ռեժիմներով՝ համաձայն սույն կարգի աղյուսակների,

բ. արյան բաղադրամասերի ֆիլտրացիան, հոսող արյան ցենտրիֆուգումը,

գ. արյան բաղադրամասերի ստացումն ավտոմատ սարքի միջոցով, որը կատարվում է սարքի օգտագործման ուղեցույցի համաձայն:

8. Պլազման հավաքվում է նաև պլազմաֆերեզի եղանակով, որի ժամանակ ամբողջական արյունից ստանում են պլազմա՝ վերադարձնելով դոնորին արյան ձևավոր տարրերը: Դոնորական պլազմաֆերեզը կատարվում է ցենտրիֆուգման և ֆիլտրացիոն եղանակներով:

9. Տրոմբոցիտային զանգվածն ստացվում է՝

1) թարմ ամբողջական արյունից ստացված տրոմբոցիտներով հարուստ պլազմայից կամ լեյկոտրոմբոցիտար շերտից.

2) անընդմեջ տրոմբոֆերեզի եղանակով:

10. Արյան հավաքման ընթացքում արյունը, դրա բաղադրամասերը, ծախսանյութերը, փորձանուշները և բոլոր գրառումները նույնականացվում են բժշկական կազմակերպությունների կողմից ու վերահսկվում են արյան և դրա բաղադրամասերի որակի, անվտանգության և փոխներարկումային բժշկական օգնության նկատմամբ որակի ապահովման հսկման ներքին ընթացակարգով:

11. Արյան հավաքման և արյան բաղադրամասերի պատրաստման ընթացքում դոնորական արյան և դրանից պատրաստված արյան բաղադրամասերի յուրաքանչյուր պարկը, ինչպես նաև այդ արյունից վերցված փորձանուշները, մակնշվում են նույն հերթական համարով:

12. Արյան բաղադրամասերի պատրաստման նպատակով հավաքվող արյան հոսքը պետք է լինի չընդհատվող՝ արյունատվության ամբողջ ընթացքում, և պետք է ապահովվի արյան և պարկի կոնսերվանտի անընդմեջ խառնումը: Հավաքվող արյան ծավալը պետք է համապատասխանի տվյալ պարկի պիտակի վրա նշված ծավալին:

13. Պատրաստվող արյան բաղադրամասերի անվտանգության հետազոտությունների իրականացման համար արյան փորձանուշը վերցվում է հավաքման համակարգի խողովակից:

14. Ընդհատվող եղանակով պլազմաֆերեզի իրականացման ժամանակ արյան ձևավոր տարրերի վերադարձումից առաջ նույնականացվում են պարկի պիտակի, դոնորական քարտի գրառումները, որոնք դոնորի կողմից հաստատվում են բանավոր հարցադրման ժամանակ (անունը, ազգանունը, հայրանունը, խմբային և ռեզուս պատկանելությունը):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՅԱՆ ԴՈՆՈՐԻ ԱՐՅՈՒՆԻՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ
ԲԱՂԱԴՐԱՄԱՍԵՐԻ ԱՆՋԱՏՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Աղյուսակ N 1

NN ը/կ	Նպատակը	Կենտրոնաձիգ արագացումը (g)	Ժամանակը (րոպե)
1.	Արյան բաժանումն էրիթրոցիտային գանգվածի և պլազմայի	2150	20
2.	Տրոմբոցիտներով հարուստ պլազմային ստացում	680	30
3.	Տրոմբոցիտների ստացումը տրոմբոցիտներով հարուստ պլազմայից	2400	20
4.	Լեյկոտրոմբոցիտային շերտի ստացում	2150	20
5.	Տրոմբոցիտների ստացումը լեյկոտրոմբոցիտային շերտից	190	20

Աղյուսակ N 2

Ցենտրիֆուգման խիստ ուժիմը	
Սկզբնական ցետրիֆուգում	5000 g 5 րոպե
Տրոմբոցիտային գանգված	
Ձևավոր տարերով աղքատացված պլազմա	5000 g 7 րոպե
Կրիոպրեցիպիտատ	
Ցենտրիֆուգման մեղմ ուժիմը	
Տրոմբոցիտներով հարուստ պլազմա	2000 g 3 րոպե

Կենտրոնաձիգ արագացումը (g) հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$g = 1,118 \times 10^{-5} n^2 r$$

որտեղ r - ռոտորի (պտուտակի) շառավիղը՝ սանտիմետրերով, n - պտույտների թիվը՝ րոպեում:

Ռոտորի շառավիղը չափվում է ռոտորի կենտրոնից մինչև ցենտրիֆուգայի բաժակի հատակը: